ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 9- Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՆԿԻՉ ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հինք ընդունելով Մովսես Մանուկյանի 2018 թվականի հունվարի 25- ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչ՝ Մովսես Մանուկյանին պատկանող Լեռնանիստ համայնքում գտնվող բնակելի տանը /սեփ. վկայական 1619961/ տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 4 -րդ փողոց 29 տուն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. հունվարի 25
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 10-Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի ձմեռային զորակոչիկներին ձեռքի ժամացույց նվիրելու համար Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեի

1) 08.2.4.51 /այլ մշակութային կազմակերպություն / ծրագրի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից դուրս գրել 80.000 / ութսուն հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 18թ դեկտեմբերի 26
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 11-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի , հիմք ընդունելով Սերգո Վաչագանի Գյուրջյանի, Ծովիկ Վոլոդյայի Հարությունյանի և Հայաստան Սերգոյի Գյուրջյանի կողմից 2018 թվականի հունվարի 29-ի Լեռնանիստ համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը, և այն հանգամանքը, որ դիմումի առարկա ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ ***որոշում եմ***.

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 9-րդ թաղամաս թիվ 15 հասցեում գտնվող Սերգո Վաչագանի Գյուրջյանին, Ծովիկ Վոլոդյայի Հարությունյանին և Հայաստան Սերգոյի Գյուրջյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-033-0044-0008 կադաստրային ծածկագրով 0.2120 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված ընդհանուր 134.47 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունները և անասնաշենքը ճանաչել օրինական :

2. Կառուցապատումն իրականացրած անձանց՝ Սերգո Վաչագանի Գյուրջյանի, Ծովիկ Վոլոդյայի Հարությունյանի և Հայաստան Սերգոյի Գյուրջյանի կողմից 60 օրյա ժամկետում օրինականացման ընդհանուր գումարը՝ 29 852.34 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. հունվարի 30
գ.Լեռնանիստ